ՅՈԼՅԱՆ
ՀՀ ԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

08.05.2026 N 02-265

«Աէմջի» ՍՊԸ -ի տնօրեն Է. Փոթոյանին

ՀՎՀՀ՝ 02863111

Հասցե՝ ք. Երևան, Աբովյան փ/23

Հեռ՝ 094277400

Էլ. փոստ՝ amg.llc@list.ru

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Փոթոյան, ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի և «Աէմջի» ՍՊԸ -ի միջև 27.02.2026թ.-ին կնքվել է «ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/09-1» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 135217942.36 (հարյուր երեսունհինգ միլիոն երկու հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր քառասուներկու դրամ երեսունվեց լումա) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Պայմանագրի 27-րդ չափաբաժնով «Աէմջի» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել «Մելֆալան 50մգ, ֆլակոն» դեղորայքը: Պայմանագրով սահմանվել է, որ ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույն Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր անգամ Գնորդից ապրանքի/ների մատակարարման պատվերը ստանալու պահից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված ապրանքի/ների քանակին համապատասխան, ընդ որում առաջին փուլի՝ պատվերի մատակարարման ժամկետը 20 օրացուցային օր է: Ապրանքի/ների մատակարարաման համար պատվերը Գնորդի կողմից Վաճառողին կատարվում է բանավոր, կամ գրավոր (նաև՝ Գնորդի

էլեկտրոնային փոստի հասցեից Վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին պատվերը ուղարկելու միջոցով): Սույն թվականի մարտի 12-ին «Աէմջի» ՍՊԸ -ի էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեին (amg.llc@list.ru) ուղարկվել է ապրանքի մատակարարման պատվեր՝ 100 հատ «Մելֆալան 50մգ, ֆլակոն» դեղի համար: Նշված պատվերից մինչ օրս «Աէմջի» ՍՊԸ-ի կողմից մատակարարում չի իրականացվել և չի նշվել հստակ ժամկետներ հնարավոր մատակարարման համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետը, ՀՀ Կառավարության 2017թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը, պայմանագրի 8,11 կետը, ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ն մասամբ լուծում է «Աէմջի» ՍՊԸ -ի հետ 27.02.2026թ.-ին կնքված ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/09-1 ծածկագրով գնման պայմանագիրը (27-րդ չափաբաժնի մասով):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի կատարման և որակավորման ապահովման համար սահմանված գումարները՝ Պատվիրատուի 1930030219151000 հաշվեհամարին, ապա

Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

- պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Արման Համբարձումյան

Գնումների խմբի ղեկավար

Հեռ՝ 094105130